

ըլլալ. սրովհետեւ այսպիսի անխոնջ պատրիարք մը, գրքի, գրչի սիրահար, բայ ի յիշատակարաններէն, հաւանական է որ գրական ուրիշ արտագրութիւններ ալ թողած ըլլայ:

Այլտաի գրական կեանքին բեղմնաւորութիւնը եւ իր երկերուն գոյութիւնը պարզապէս ըզմանք (Desideratum) մըն էր ինձ համար, եթէ Նալեան, իր աշակերտը, գիտել տուած չըլլար թէ Այլտա աւելի խօսող եղած է քան գրող մը. խօսող մը մանաւանդ աստուածաբանական նիւթերու վրայ. այնպէս որ Նալեան իր վարդապետը կը նկատէ իբր «ի լոյս ածող»ը աստուածաբանութեան եւ «բռնի» (= խօսքով, խօսելով) սրբագրիչ»ը (Նալեան Մեկն. Նորեմբ. էջ 1135: Տես քիչ ետքը «Այլտաի աշակերտները», գլուխը Ծանօթ. 1.):

Այլտա ինքզինքը «Բանասէր» կ'անուանէ, անշուշտ բառին ճիշտ այն իմաստովը, զոր ունի արդի Գրասէր բառը: Եւ իրաւի. Այլտա գրասէր մ'է բառին ամէնէն բարձր եւ ամէնէն գործնական առումով: Եթէ շատ վարկաբեկ եղած չըլլար մեր օրերուն Վեկեան տիտղոսը, անոր օգոստոսեան նշանակութեամբ պիտի մակագրէի այս գլուխը. «Այլտա Մեկնեսա»: Բայց կը սիրեմ յարգել իր յիշատակը եւ իբր Գրասէր (= «Բանասէր») երեւան բերել իր արժանիքը:<sup>1</sup>

1 Նալեան իր Նարեկի Մեկնութեան Յիշատակարանին մէջ կը շեշտէ Գրասէր տիտղոսը իր Վարդապետին ու Վարժապետին վրայ: — Երուսաղէմի Մատենադարանին մէջ Աւետարան մը կայ, Շղթայակրէն եւ Այլտան յիշատակ մը, զոր 1733 (= ՌՃՁԲ)ին արձանագրութեամբ թողարկուած են Զիմառցի Նալոյլի (= Նալեան) մահտեսի Պօղոս եւ իր կինը մահտեսի Թամամ: Այն Աւետարանին Յիշատակարանին մէջ Այլտա կը շեշտուի իբր «Բռնիբռն Վեպոստոս» — «Սօրին» (= Գրիգորի Շղթայակրի) հարազատն եւ յոգնաշխատն վասն Սրբոյ Տանս (= Ս. Յակոբայ) դատաստանի Տէր Յովհաննէս Աստուածաբան Վարդապետն, Ժաջ հարարն եւ